

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-1-4-Ա

ք. Երևան

10.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հունվարի 10-ի նիստում քննարկեց 2021 թվականի դեկտեմբերի 9-ին արտոնագրային հավատարմատար Ջարուիի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Բրիթիշ Ամերիքն Թբեքոու (Բրենդս) Ինք. ընկերության (251 Little Falls Drive, Suite 100, Wilmington DE 19808-1674, United States of America, US) «CRYSTAL KENT» (No20200781) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «CRYSTAL ԿՐԻՍՏԱԼ» («Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ, ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10 AM, N 8745, 10.11.2004) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 130-րդ կետի 1-ին ենթակետի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ «CRYSTAL» բառը, որին ավելի վաղ գրանցված ապրանքային նշանում տրվել է օգտագործման բացառիկ իրավունք 34-րդ դասի

ապրանքների համար, ամբողջությամբ ներառված է հայտարկված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտարկված և հակադրված ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են: Հակադրված «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի անունով գրանցված (վկայագիր No8745) ապրանքային նշանի մեջ ներառված «CRYSTAL» բառը, որին տրվել է օգտագործման բացառիկ իրավունք ամբողջությամբ ներառված է հայտարկված ապրանքային նշանի մեջ:

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ մերժման մասին որոշումը իրավաչափ է և համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 7 կողմ և մեկ ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «CRYSTAL KENT» (No20200781) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ